

Սուրբ Գրոց Սերտողություն : Դաս Թիւ 166

Ապաշխարություն – Ապաշխարություն պարզապէս նշանակում է մտքի մի փոփոխություն որը յառաջացնում է կեանքի փոփոխություն: Հին Կտակարանում Եբրայերէն «նախէն» բայը գործածել է նշանակելով ափսոսել կամ զոջալ (Յոր 42:6): Ուրիշ գործածում բառ «շուվ»բայն է որը նշանակում է վերադառնալ կամ ետ դառնալ (Մաղմոս 7:12): Նոր Կտակարանում Յունարէն «մէթանաէօ» բայը թարգմանել է որպէս ապաշխարել, եւ «մէթանոյա» գոյականը որպէս ապաշխարություն: Այս բառերը բարդ բառեր են կազմւած «մէթա» բառից որը նշանակում է յետոյ կամ անց, եւ «նոէո» բառից որը նշանակում է հասկանալ կամ ըմբռնել: Ուստի «մէթանաէօ» բառը ակնարկում է տարբեր մտածել յետագայում (Մատթէոս 3:2, 4:17, Գործք Առաքելոց 3:19):

Հաւատքի նման, ապաշխարութիւնը նաեւ ներառում է միտքը, զգացումները, կամքն ու սիրտը: Մէկը նախ պիտի ունենայ մեղքի հասկացողութիւնը՝ յատկապէս իր անձնական մեղքն ու յանցանքը սուրբ Աստուծոյ առջեւ (Հռովմայեցիս 3:20): Դրանից յետոյ յաջորդում է մեղքի պատճառով եղած վիշտ: Իսկական ապաշխարութիւնը նաեւ պահանջում է մեղքի լքման եւ դրանից ետ դառնալու անձնական եւ անկեղծ սրտի ցանկութիւնը եւ որոշումը: Այս է ապաշխարութեան ամենակարեւոր մասը (Երեմիա 25:5-6): Ապաշխարութեամբ մենք ներքին որոշում ենք կայացնում ետ դառնալ հին կեանքի նպատակներից, ճանապարհներից եւ կուռքերից, եւ ապրել մի նոր կեանք Քրիստոսի մէջ (Ա. Թեսաղոնիկեցիս 1:9):

Խղճահարություն կամ զոջում – Սուրբ Գրքում տեսնում ենք երկու տեսակ ապաշխարություն: Բ. Կորնթացիս 7:9-10ում Պողոսը զանազանում է աշխարհային եւ աստուածային տրտմութեան միջեւ: Ապաշխարութիւնը որը գալիս է աշխարհային տրտմութիւնից մտքի եւ վարելակերպի մի փոփոխութիւնն է մղւած մէկի արարքների ժխտական հետեւանքներից: Տեսնում ենք այս փոքր երեխաների մէջ, երբ բռնում են մի սխալ արարքի մէջ եւ իմանալով որ ծեծ են ստանալու, սկսում են լացել եւ խոստանալ որ էլ երբեք այդ չեն անելու: Այդ նոյնն է չափահասների վերաբերեալ, որոնք երբ մեղքի մէջ են բռնում, պատժի վախի, ամօթի կամ վիրաւորւած հպարտութեան պատճառով վշտացած կամ խղճահար են գտնում:

Իրականում նրանք վշտալի կամ փշուած չեն իրենց մեղքի անզգամութեան կամ զգուշութեան համար, եւ չկայ որեւէ մեղքի մերժում: Նրանք զոջում են պարզապէս որովհետեւ ուզում են պատժից փախչել: Եթէ նրանք չէին բռնել նրանք պարզապէս կ'շարունակէին առանցի որեւէ զոջման: Այսպէս ապաշխարութիւնը անընդունելի է Աստծուն եւ աստուածաբանութեան մէջ ճանաչւած է որպէս միայն խղճահարութեան (խղճի անհանգստութեան) ապաշխարություն (Մատթէոս 27:3-4): Պողոսը կոչում է այս աշխարհային տրտմութիւն, քանի որ այդ մարդուց է արտաղրում (Երեմիա 13:23), որը չի յառաջացնում փրկութիւն այլ արտաղրում է յաւելեալ յանցանք, ամօթ եւ վախ, եւ ի վերջոյ մահ (Առակաց 28:1, Եզեկիէլ 18:4, Հռովմայեցիս 6:23ա):

Միւս ձեռքի վրայ, ապաշխարութիւնը որը գալիս է աստուածային տրտմութիւնից իսկական ապաշխարություն է, մղւած Աստուծոյ սիրուց, եւ մի սրտից որը կտորւած է մեղքի զգուշութեան պատճառով, եւ թէ ինչպէս այդ անարգել եւ վիրաւորել է Աստծուն: Գիտակցելով այս, մեղաւորը իրապէս խղճահար եւ տրտմած է՝ ատելով իր մեղքը եւ որոշելով որ թողնել իր մեղքը եւ ապրելակերպը: Այսպէս ապաշխարութիւնը ընդունելի է Աստծուն եւ աստուածաբանութեան մէջ ճանաչւած է որպէս իսկ զոջման ապաշխարություն: Պողոսը կոչում է այս աստուածային տրտմութիւն, քանի որ այդ Սուրբ Հոգուց է արտաղրում, որը ապաշխարութիւն է գործում եւ ապա փրկութեան է յառաջացնում (Մաղմոս 51, Յովել 2:12-13, Մատթէոս 5:4, Ուէստմինստորը Հաւատոյ Հանգանակ 15:2): Իսկական ապաշխարութիւնը կ'յառաջացնէ փրկութիւն անհատաւորացեալների համար, եւ ի յայտ կ'գայ մի նոր կեանքում դարձւած դէպի Աստուած՝ փոխւած խորհուրդներով, ճանապարհներով եւ ապրելակերպով. եւ հաւատացեալների համար այդ ի յայտ կ'գայ իրենց Քրիստոնէական կեանքում մեղքից շարունակաբար դառնալով դէպի ուղղարարութիւն, փաստելով նրանց փրկութեան իրականութիւնը (Բ. Կորնթացիս 7:11):

Ապաշխարութեան գործեր – Աստուածաշունչը յաճախ խօսում է ապաշխարութեան գործերի առթիւ (Մատթէոս 3:8, Ղուկաս 3:8-9, Գործք Առաքելոց 26:20): Սակայն, պիտի չխառնենք մեղքից դառնալու ներքին փափաքն ու որոշումը անձի նկարագրի եւ ապրելակերպի իրական փոփոխութեան հետ: Իսկական ապաշխարութիւնը, ճշմարիտ հաւատքի նման, անխուսափելիօրէն կ'յառաջացնէ փոխւած նկարագիր ու վարք, սակայն սրանք փրկութեան պտուղներն են ու ոչ փրկութեան պայմանները:

Աստուծոյ պարգեւ – Ինչպէս նշեց անցեալ դասում, փրկարար հաւատքը Աստուծուց մի պարգեւ է եւ չի գտնում իր ծագումը մարդու մէջ: Նոյնն էլ ուղիղ է իսկական ապաշխարութեան վերաբերեալ (Զաքարիա 12:10, Գործք Առաքելոց 5:30-31, 11:18, Բ. Տիմոթէոս 2:24-26): Ուէստմինստորը Հաւատոյ Հանգանակը կոչում է ապաշխարութիւնը որպէս «մի աւետարանական շնորհք» (Գլուխ 15, Բաժին 1): Փրկարար հաւատքը եւ ապաշխարութիւնը վերածնութեան պտուղներն են՝ արտաղրւած ընտրեալների մէջ Սուրբ Հոգու միջոցով, առանց որին ոչ ոք կարող է փրկի: